ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության միջև համաձայնության, բարեկամության և համագործակցության

Հայաստանի Հանրապետությունը և Ֆրանսիայի Հանրապետությունը,

հաշվի առնելով իրենց երկու ժողովուրդների միջև պատմության ընթացքում հաստատված առանձնահատուկ բարեկամական հարաբերությունները և բազմաբնույթ կապերը,

ընդունելով այն իրողությունը, որ Հայաստանի Հանրապետությունը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության իրավահաջորդ պետություններից մեկն է,

ցանկանալով իրենց կապերն ամրապնդել դարերի խորքից եկող բարեկամության ոգով և զարգացնել իրենց համագործակցությունը բոլոր բնագավառներում,

վերահաստատելով իրենց հավատարմությունը միջազգային իրավունքին, մասնավորապես, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունից բխող պարտավորություններին,

գիտակցելով այն պարտավորությունների կարևորությունը, որ իրենք ստանձնել են՝ ստորագրելով Հելսինկիի Եզրափակիչ ակտը և Փարիզի խարտիան Նոր Եվրոպայի համար, և ձգտելով ամբողջ եվրոպական մայրցամաքում ստեղծել անվտանգության և համագործակցության մեխանիզմներ,

ցանկանալով նպաստել միացյալ Եվրոպայի կայունությանն ու զարգացմանը,

հաշվի առնելով Եվրոպական միության կառուցման հեռանկարը և խաղաղ ու համերաշխ Եվրոպայի կառուցման գործին նրա ներդրումը,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Իրենց երկկողմ հարաբերություններում Հայաստանի Հանրապետությունը և Ֆրանսիայի Հանրապետությունը գործում են որպես ինքնիշխան և իրավահավասար պետություններ, բարեկամության ու փոխադարձ վստահության ոգով՝ սերտորեն համագործակցելով բոլոր բնագավառներում:

Երկու Կողմերը, ըստ անհրաժեշտության, կնքում են այլ համաձայնագրեր սույն Պայմանագրի կետերի կիրառման համար:

Հոդված 2

Հայաստանի Հանրապետությունը և Ֆրանսիայի Հանրապետությունը, ընդունելով ազատության և ժողովրդավարության համընդհանուր արժեքները, համագործակցում են մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության ու խթանման համար, մասնավորապես, իրավասու միջազգային կազմակերպությունների շրջանակներում:

Նրանք միավորում են իրենց ջանքերը միջազգային անվտանգությանը նպաստելու, հակամարտությունները կանխելու և պետությունների հարաբերություններում միջազգային իրավունքի նորմերը հարգելու նպատակով:

Հոդված 3

Հայաստանի Հանրապետությունը և Ֆրանսիայի Հանրապետությունը կանոնավոր խորհրդակցություններ են անցկացնում համապատասխան մակարդակներով, երկկողմ հարաբերությունների վերաբերյալ տեսակետներ փոխանակելու համար, ինչպես նաև ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող միջազգային խնդիրների, մասնավորապես, Եվրոպայի անվտանգության և համագործակցության արմատական հարցերի վերաբերյալ:

Այդ բնագավառներում Կողմերը ձգտում են հնարավորին չափ ներդաշնակեցնել իրենց դիրքորոշումները և, ըստ անհրաժեշտության, վարում են համատեղ կամ համաձայնեցված գործողություններ:

Այդ նպատակով Կողմերի միջև ամենաբարձր մակարդակի հանդիպումներ են տեղի ունենում՝ ըստ համաձայնության, իսկ արտաքին գործերի նախարարների միջև՝ առնվազն տարին մեկ անգամ: Արտաքին գործերի նախարարությունների միջև հաստատվում է սերտ համագործակցություն:

Երկու պետությունների կառավարությունների մյուս անդամները հանդիպում են ըստ անհրաժեշտության՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր քննարկելու համար:

Հոդված 4

Հայաստանի Հանրապետությունը և Ֆրանսիայի Հանրապետությունը միմյանց հետ խորհրդակցություններ են անցկացնում այն միջազգային կազմակերպությունների շրջանակներում, որոնց անդամակցում են, մասնավորապես, Միավորված ազգերի կազմակերպությունում՝ անհրաժեշտության դեպքում իրենց դիրքորոշումները հնարավորին չափ ներդաշնակեցնելու և այդ շրջանակներում ընդունված որոշումները առավելագույն արդյունավետությամբ իրագործելու նպատակով:

Հոդված 5

Ֆրանսիայի Հանրապետությունը պարտավորվում է աջակցել Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ընկերակցության միջև կապերի զարգացմանը:

Հայաստանի Հանրապետության հետ երկկողմ համաձայնագրերով Ֆրանսիայի Հանրապետության ստանձնած պարտավորություններում հարգվում են Եվրոպական ընկերակցության հիմնարար պայմանագրերը և նրանց կիրառման համար կազմված տեքստերը:

Հոդված 6

Հայաստանի Հանրապետությունը և Ֆրանսիայի Հանրապետությունը սերտորեն համագործակցում են Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության շրջանակներում:

Կողմերը համատեղ գործողություններ են ծավալում նրա՝ հատկապես իրավական ոլորտի հաստատությունների ամրապնդման համար, որպեսզի նպաստեն կայունությանը, անվտանգությանը և իրավական պետությանը Եվրոպական մայրցամաքում:

Նրանք օժանդակում են մասնավորապես այն նորմերի ընդունմանը, որոնք նպաստում են հակամարտությունների կանխմանը:

Կողմերը համագործակցում են միմյանց և այլ շահագրգիռ երկրների հետ՝ Եվրոպայի անվտանգության վերաբերյալ պայմանագիր կնքելու նպատակով:

Ֆրանսիայի Հանրապետությունը ընդգծում է Եվրոպական միության կառուցման կարևորությունը, որը, իրագործելով ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականություն, թույլ կտա ամրապնդել համագործակցությունը Եվրոպայի պետությունների միջև և կարևորագույն ներդրում կունենա մայրցամաքի և ամբողջ աշխարհի

կայունության գործում: Հայաստանի Հանրապետությունը ողջունում է այդ:

Հոդված 7

Հայաստանի Հանրապետությունը և Ֆրանսիայի Հանրապետությունը, ընդգծելով զինաթափման համաձայնագրի վճռական դերը Եվրոպայի և միջազգային անվտանգության գործում, Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության շրջանակներում օժանդակում են զինաթափման գործընթացին, վստահության ու անվտանգության ամրապնդմանը և հակամարտությունների կանխմանը Անվտանգության համաժողովի շրջանակներում:

Կողմերը, մասնավորապես, կարևորություն են տալիս զանգվածային ոչնչացման զենքերի չտարածմանն ուղղված միջոցառումներին և այդ նպատակով համաձայնեցված գործունեություն են ծավալում միջազգային ատյաններում:

Հոդված 8

Հաշվի առնելով Եվրոպայի անվտանգության հարցերում տեղի ունեցած հիմնական փոփոխությունները և, մասնավորապես, առճակատման իրողության ավարտը՝ Հայաստանի Հանրապետությունը և Ֆրանսիայի Հանրապետությունը զարգացնում և խորացնում են իրենց կապերը ռազմական ասպարեզում: Այդ նպատակով Կողմերը պարբերաբար տեսակետներ են փոխանակում պաշտպանության իրենց հիմնախնդիրների վերաբերյալ:

Այդ նպատակով նրանք օժանդակում են արտաքին գործերի և պաշտպանության նախարարությունների, ինչպես նաև երկու պետությունների բանակների գլխավոր շտաբների միջև կապերին:

Հոդված 9

Այն դեպքում, երբ ծագում է Կողմերից մեկի կարծիքով խաղաղությանը սպառնացող կամ նրա անվտանգության հիմնական շահերը հարցականի տակ դնող իրավիճակ, տվյալ Կողմը կարող է դիմել մյուս Կողմին, որ այդ խնդրի շուրջ անհապաղ խորհրդակցություններ անցկացվեն: Նրանք կջանան որդեգրել մի ընդհանուր դիրքորոշում և հնարավորին չափ համաձայնեցված կգործեն միջազգային ատյաններում՝ այդ իրավիճակին դիմակայելու համար:

Հոդված 10

Հայաստանի Հանրապետությունը և Ֆրանսիայի Հանրապետությունը նպաստում են երկու պետությունների պառլամենտների և պառլամենտականների միջև համագործակցության հաստատմանն ու փորձի փոխանակմանը:

Հոդված 11

Հայաստանի Հանրապետությունը և Ֆրանսիայի Հանրապետությունը զարգացնում են համագործակցություն ժողովրդավարական ինստիտուտների և իրավական պետության ոլորտներում:

Հոդված 12

1. Հայաստանի Հանրապետությունը և Ֆրանսիայի Հանրապետությունը զարգացնում են համագործակցությունը տնտեսության, արդյունաբերության, գիտության և տեխնիկայի բնագավառներում:

Կողմերն ընդունում են այդ համագործակցության կարևորությունը Հայաստանի Հանրապետությունում իրականացվող տնտեսական բարենորոգումների հաջողության համար:

2. Յուրաքանչյուր Կողմ աշխատում է բարելավել մյուս Կողմի ձեռնարկությունների գործունեության պայմաններն իր տարածքում: Կողմերը քաջալերում են անմիջական ներդրումները, համատեղ ձեռնարկությունների ստեղծումը, տեխնիկական և գիտական փորձի փոխանակումը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական բնագավառի մասնագետների պատրաստումը:

3. Կողմերը սերտ համագործակցություն են զարգացնում այն բնագավառներում, որոնք առանձնահատուկ կարևորություն ունեն իրենց ապագայի համար, մասնավորապես, հետևյալ ասպարեզներում.

- տնտեսության վերակառուցում և կառավարում,
- տրանսպորտ և սարքավորումներ,
- հեռահաղորդակցություններ,
- էներգիա,
- գյուղատնտեսություն և սննդի արդյունաբերություն,
- ռեսուրսների շահագործում,
- շրջակա միջավայրի պահպանություն:

4. Հաշվի առնելով իրենց փոխադարձ շահերը և կապի մեջ լինելով Եվրոպական ընկերակցության և նրա անդամների հետ՝ Կողմերը համագործակցում են միջազգային տնտեսական և ֆինանսական հաստատությունների՝ մասնավորապես Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Համաշխարհային բանկի և Միջազգային դրամական ֆոնդի շրջանակներում:

Հոդված 13

1. Հայաստանի Հանրապետությունը և Ֆրանսիայի Հանրապետությունը, ցանկանալով զարգացնել հարաբերությունները Հայաստանի ու Ֆրանսիայի ժողովուրդների միջև և նպաստել Եվրոպական մայրցամաքի բոլոր ժողովուրդների համար բաց մշակութային տարածքի ստեղծմանը, խորացնում են իրենց համագործակցությունը գիտության, տեխնիկայի, կրթության ու մշակույթի բնագավառներում՝ առանձնահատուկ կարևորություն տալով կադրերի պատրաստմանը, մասնավորապես, տնտեսական ու վարչական կառավարման բնագավառներում, ինչպես նաև փոխանակումներին ու համատեղ գործողություններին:

2. Հայաստանի Հանրապետությունը առանձնահատուկ աջակցություն է ցուցաբերում ֆրանսերենի ուսուցմանը և օգտագործմանը: Ֆրանսիայի Հանրապետությունը խրախուսում է հայոց լեզվի ուսումնասիրումը Ֆրանսիայում:

Երկու Կողմերը առանձնահատուկ կարևորություն են տալիս լեզվական կրթությանը, որն անհրաժեշտ նախադրյալ է երկարաժամկետ համագործակցության համար:

3. Կողմերը աջակցում են գիտահետազոտական հիմնարկների և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև հարաբերությունների զարգացմանը՝ խրախուսելով համատեղ գիտական նախագծերի մշակումը:

4. Հայաստանի և Ֆրանսիայի ժողովուրդների ավելի լավ փոխճանաչման նպատակով Կողմերն օժանդակում են փոխանակումների զարգացմանը մշակույթի և գեղարվեստի բնագավառներում: Նրանք նպաստում են համագործակցության զարգացմանը զանգվածային լրատվության ասպարեզում, ինչպես նաև մյուս Կողմի գրականության և մամուլի տարածմանը: Կողմերը նպաստում են մշակութային հաստատությունների ստեղծմանը:

5. Կողմերը, ցանկանալով միմյանց միջև հաստատել հավասարակշռված և իրենց պետությունների շահերին համապատասխանող համագործակցություն, համաձայնում են

պարբերականորեն մշակել փոխանակումների համատեղ ծրագրեր մշակույթի, կրթության, գիտության, տեխնիկայի և ուսուցման ասպարեզներում:

Հոդված 14

Հայաստանի Հանրապետությունը և Ֆրանսիայի Հանրապետությունը խրախուսում են կապերը երկու երկրների քաղաքացիների, մասնավորապես, երիտասարդության միջև:

Այդ նպատակով նրանք նպաստում են հատկապես դպրոցների, լիցեյների, բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտահետազոտական ինստիտուտների միջև ուղիղ համագործակցությանը՝ աշակերտների, ուսուցիչների ու դասախոսների, գիտաշխատողների փոխանակման ճանապարհով:

Հոդված 15

Հայաստանի Հանրապետությունը և Ֆրանսիայի Հանրապետությունը խրախուսում են ապակենտրոնացված համագործակցությունը, մասնավորապես, տեղական վարչական մարմինների եղբայրացումը՝ հարգելով սույն Պայմանագրով սահմանված նպատակները: Կողմերը նպաստում են իրենց համալսարանների, առևտրի պալատների, գյուղատնտեսության պալատների և հանրային այլ հաստատությունների միջև հարաբերությունների հաստատմանը:

Հոդված 16

Նույն ոգով Կողմերը դյուրացնում են համագործակցությունը երկու երկրների ընկերությունների և քաղաքական, հասարակական, արհմիութենական ու մարդասիրական կազմակերպությունների միջև:

Հոդված 17

Հայաստանի Հանրապետությունը և Ֆրանսիայի Հանրապետությունը ընդլայնում են իրենց համագործակցությունը հյուպատոսական ծառայությունների բնագավառում:

Կողմերը համապատասխան պայմաններ են ստեղծում՝ դյուրացնելու համար երկու երկրների քաղաքացիների տեղաշարժը:

Հոդված 18

Հայաստանի Հանրապետությունը և Ֆրանսիայի Հանրապետությունը նպաստում են երկու երկրների դատական հիմնարկների միջև համագործակցությանը, մասնավորապես, քաղաքացիական իրավունքի հարցերով փոխօգնության խնդիրներում:

Կողմերը կազմակերպում են համագործակցություն հանրային անվտանգությունն ապահովող մարմինների՝ առանձնապես ոստիկանության և ժանդարմերիայի միջև: Կողմերը համագործակցում են մասնավորապես Ինտերպոլի շրջանակներում՝ կազմակերպված հանցագործության, թմրադեղերի անթույլատրելի առևտրի, մաքսանենգության, ինչպես նաև արվեստի գործերի անօրինական առևտրի դեմ պայքարի համար: Նրանք համապատասխան համագործակցություն կսկսեն միջազգային ահաբեկչության դեմ պայքարի բնագավառում:

Հոդված 19

Սույն Պայմանագրի կետերը ոչ մի կերպ չեն անդրադառնում Կողմերի ստանձնած պարտավորություններին երրորդ պետությունների նկատմամբ և ուղղված չեն նրանցից ոչ մեկի դեմ:

Հոդված 20

1. Սույն Պայմանագիրը կներկայացվի վավերացման և ուժի մեջ կմտնի վավերացման վերջին փաստաթղթի ստացումից 30 օր հետո:

2. Սույն Պայմանագիրը կնքվում է 10 տարի ժամկետով: Նրա գործողությունը ինքնըստինքյան կերկարաձգվի յուրաքանչյուր հինգ տարին մեկ, եթե Կողմերից որևէ մեկը մյուս Կողմին ընթացիկ ժամկետի ավարտից մեկ տարի առաջ գրավոր չզգուշացնի Պայմանագիրը չեղյալ հայտարարելու վերաբերյալ իր որոշման մասին:

Կատարված է Փարիզ քաղաքում 1993 թվականի մարտի 12-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ֆրանսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Պայմանագիրն ուժի մեջ է մտել 1995 թվականի մայիսի 31-ից: